

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՔԸ

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՔԸ

Պարսկաստանի Կիւրոս թագաւորին առաջին տարին, որպէսզի Երեմիայի բերանով ըստած՝ “Տէրոց խօսքը բիրագործուի, Տէրը Պարսկաստանի Կիւրոս թագաւորին հոգին արթնցուց, եւ ան իր ամբողջ թագաւորութեան մէջ գծանուցանել տուաւ ու նաեւ հրովարտակ գրեց՝ ըսելով.”

2 «Սա՛ կը յայտարարէ Կիւրոս՝ Պարսկաստանի թագաւորը. “Երկինքի Աստուածը՝ Եհովան Երկրի բոլոր թագաւորութիւնները ինձի տուաւ, եւ ի՞նք ինձի հրահանգեց որ Դրէաստանի Երուսաղէմին մէջ իրեն տուն մը կառուցանեմ: 3 Զեզմէ ո՞վ որ անոր ամբողջ ժողովուրդէն է, իր Աստուածը՝ Եհովան իրեն հետ թող ըլլայ, ու Հրէաստանի Երուսաղէմը թող բարձրանայ եւ Խրայէլի Աստուծոյն՝ Եհովայի – Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյն – տունը կառուցանէ: 4 Ամէն տեղ ուր մնացողներէն իւրաքանչիւրը պանդիստացած է, իր բաղաքացիները արծաթով, ոսկիով, ինչքով եւ անասուններով թող նեցուկ ըլլան իրեն, Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյն տան համար տրուած յօժարակամ ընծաններէն զատ□»:

5 Այն ատեն Յուդայի եւ Բենիամինի գնահապետները, քահանաներն ու Ղետացիները կանգնեցան այն բոլոր մարդոց հետ, որոնց հոգին Աստուած արթնցուցած էր, որպէսզի բարձրանան եւ Երուսաղէմ եղող Տէրոց տունը կառուցանեն: 6 Անոնց շուրջը եղողներէն բոլորն ալ իրենց օգնեցին արծաթէ առարկաներով, ոսկիով, ինչքով, անասուններով ու թանկագին իրերով, բոլոր յօժարակամ ընծայուածներէն զատ:

7 Կիւրոս թագաւորը Տէրոց տան անօթները դուրս հանեց, որոնք Նաբուգոդոնոսոր Երուսաղէմէն հանելով՝ իր աստուծոյն տունը դրեր էր: 8 Պարսկաստանի Կիւրոս թագաւորը զանոնք Միթրիդատ գանձապետին ծեռքով դուրս հանել տուաւ, եւ զանոնք Իհամրանքով յանձնեց՝ Յուդայի Սասբասար իշխանին: 9 Ահա՛ ասիկ անոնց թիւր–երեսուն ոսկիէ կոնք, հազար արծաթէ կոնք, քսանինք դանակ, 10 երեսուն ոսկիէ ըմպանակ, չորս հարիւր տասը արծաթէ ըմպանակ՝ Երկրորդ կարգի, ու հազարաւոր ուրիշ անօթներ: 11 Բոլոր ոսկիէ եւ արծաթէ առարկաները՝ հինգ հազար չորս հարիւր հատ էին: Սասբասար ասոնք բոլորը բտարաւ, երբ տարագրութեան գացողները Բաբելոնէն Երուսաղէմ ծվերադարձան:

ա Եբր.՝ Եհովայի

բ Եբր.՝ աւարտի

գ Եբր.՝ ծայն անցընել

դ Կամ՝ Յուդայի

ե Եբր.՝ տեղին մարդիկը

գ Այսինքն՝ հայրերու գլխաւորները

է Եբր.՝ ծեռքերը ուժովցուցին

լ Եբր.՝ հաշուեց

թ Եբր.՝ բարձրացուց

ժ Եբր.՝ բարձրացուցին

ՏԱՐԱԳՐՈՒԹԵՆԸՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ
(ՆԷԽՄ. 7. 4 -7 3)

2

Ահա՛ւասիկ գաւառին ՚ընակիչները՝ որոնք գերութենէն բվերադանան, **այսինքն՝** տարագիրներուն **որդիները** – Բարելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը զանոնք Բարելոն տարագրած էր – որոնք Երուսաղէմ ու Հրէաստան վերադանան, իւրաքանչիւրը՝ իր քաղաքը: **2 Անոնք Զօրաբարէլի, Յեսուի, Նէմիայի, Սարայիայի, Հոկեղիայի, Մուրթէի, Բաղասանի, Մասփարի, Բագուէի, Հոկումի** ու **Բաանայի հետ եկան:** **Ահա՛ւասիկ հսրայէլի** ժողովուրդին մարդոց թիւր.- **3 Փարոսի որդիները՝ երկու հազար հարիւր եօթանասուներկու հոգի էին,** **4 Սափատիայի որդիները՝ երեք հարիւր եօթանասուներկու,** **5 Արահի որդիները՝ եօթը հարիւր եօթանասունհինգ,** **6 Փահաթ-Մովաքի որդիները՝ Յեսուի** ու **Յովաքի որդիներէն՝ երկու հազար հարիւր տասներկու, 7 Եղամի որդիները՝ հազար երկու հարիւր յիսունչորս,** **8 Զաթուի որդիները՝ ինը հարիւր քառասունհինգ,** **9 Զաքքայի որդիները՝ եօթը հարիւր վաթսուն,** **10 Բանիի որդիները՝ վեց հարիւր քառասուներկու,** **11 Բեբայիի որդիները՝ վեց հարիւր քսաներեք,** **12 Ազգադի որդիները՝ հազար երկու հարիւր քսաներկու,** **13 Աղոնիկամի որդիները՝ վեց հարիւր վաթսունվեց,** **14 Բագուէի որդիները՝ երկու հազար յիսունվեց,** **15 Աղինի որդիները՝ չորս հարիւր յիսունչորս,** **16 Ատերի որդիները՝ Եգեկիայէն՝ իննսունութ,** **17 Բեսէիի որդիները՝ երեք հարիւր քսաներեք,** **18 Յորայի որդիները՝ հարիւր տասներկու,** **19 Հասումի որդիները՝ երկու հարիւր քսաներեք,** **20 Գաբերի որդիները՝ իննսունհինգ,** **21 Բեթլեհէմի որդիները՝ հարիւր քսաներեք,** **22 Նետոփայի մարդիկը՝ յիսունվեց,** **23 Անաթովթի մարդիկը՝ հարիւր քսանութ,** **24 Ազամօթի որդիները՝ քառասուներկու,** **25 Կարիաթարիմի, Կեփիրայի ու Բերովթի որդիները՝ եօթը հարիւր քառասուներեք,** **26 Ռամայի ու Գաբայի որդիները՝ վեց հարիւր քսանմէկ,** **27 Մաքմասի մարդիկը՝ հարիւր քսաներկու,** **28 Բեթէլի ու Գայիի մարդիկը՝ երկու հարիւր քսաներեք,** **29 Լաբասի որդիները՝ յիսուներկու,** **30 Մակերիսի որդիները՝ հարիւր յիսունվեց,** **31 Միւս Եղամի որդիները՝ հազար երկու հարիւր յիսունչորս,** **32 Հարիմի որդիները՝ երեք հարիւր քսան,** **33 Դովդի, Աղիդի եւ Ովնովի որդիները՝ եօթը հարիւր քսանհինգ,** **34 Երիքովի որդիները՝ երեք հարիւր քառասունհինգ,** **35 Սենաայի որդիները՝ երեք հազար վեց հարիւր երեսուն:**

36 Զահանաները.- Յեսուի տունէն՝ Յեղայիայի որդիները՝ ինը հարիւր եօթանասուներեք հոգի էին, **37 Եմմերի որդիները՝ հազար յիսուներկու,** **38 Փասուրի որդիները՝ հազար երկու հարիւր քառասունօթը,** **39 Հարիմի որդիները՝ հազար տասնեօթը:**

40 Դեւտացիները.- Ովդուիայի որդիներէն՝ Յեսուի եւ Կադմիէլի որդիները եօթանասունչորս հոգի էին:

41 Երգողները.- Ասափի որդիները հարիւր քսանութ հոգի էին:

42 Դոնապաններուն որդիները.- Սեղումի որդիները, Ատերի որդիները, Տեղմոնի որդիները, Ակլութի որդիները, Ատիտայի որդիները, Սուբայի որդիները՝ բոլորը հարիւր երեսունհինը հոգի էին:

^ա Երր.՝ որդիները

^բ Երր.՝ բարձրացան

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՅԸ

43 և Նաթանայիմները.- Սիայի որդիները, Ասուփայի որդիները, Տաբաւոթի որդիները, 44 Կերոսի որդիները, Սիայի որդիները, Փաղոնի որդիները, 45 Ղաքանայի որդիները, Ագաբայի որդիները, Ակկուրի որդիները, 46 Ագարի որդիները, Սաղամէի որդիները, Անանի որդիները, 47 Գեղդէլի որդիները, Գահարի որդիները, Ռէայիայի որդիները, 48 Ռասինի որդիները, Նեկոդայի որդիները, Գազամի որդիները, 49 Ոզայի որդիները, Փասէի որդիները, Բասի որդիները, 50 Ասենայի որդիները, Մովանիմի որդիները, Նեփուսիմի որդիները, 51 Բակրոկի որդիները, Ակուփայի որդիները, Արուրի որդիները, 52 Բասաղոթի որդիները, Մէհդայի որդիները, Արսայի որդիները, 53 Բարկոսի որդիները, Սիսարայի որդիները, Թամայի որդիները, 54 Նեսիայի որդիները, Ատեփայի որդիները. 55 Սողոմոնի ծառաներուն որդիները, Սոտէի որդիները, Սոփերաթի որդիները, 56 Փարեդայի որդիները, Յեղայի որդիները, Դերկոնի որդիները, 57 Գեղդէլի որդիները, Սափատիայի որդիները, Ատտիլի որդիները, Փաքարաթ-Ասեբայիմի որդիները, Ամիի որդիները. 58 բոլոր Նաթանայիմներն ու Սողոմոնի ծառաներուն որդիները երեք հարիւր իննսուներկու հոգի էից:

59 Ահա՛ւասիկ թեղմեղայէ, թեղարսայէ, թերուբէ, Ադդանէ ու Եմմերէ վերադարձողները, որոնք իրենց նահապետութիւնը եւ իրենց զարմը չկրցան ապացուցանել, այսինքն՝ Խրայէլէն ըլլալը.- 60 Դաղայիայի որդիները, Տուբիայի որդիներն ու Նեկոդայի որդիները՝ վեց հարիւր յիսուներկու հոգի. 61 նաև քահանաներուն որդիներէն՝ Աբայիայի որդիները, Ակկուսի որդիները, Բերգելիի որդիները, որ Գաղատիացի Բերգելիի աղջիկներէն կին առնելով՝ անոնց անունով կոչուեցաւ: 62 Ասոնք իրենց ազգահամարի արծանագրութիւնը փնտոեցին, բայց չգտնուեցաւ. ուստի քահանայութենէ արգիլուեցան՝ իբր անմաքուր, 63 եւ Կառավարիչը անոնց ըսաւ. «Մինչեւ որ Ուրիմով ու Թումիմով քահանայ մը չելլէ, անոնք ամենասուրբ բաներէն թող չուտեն»:

64 Համախմբումը քառասուներկու հազար երեք հարիւր վաթսուն հոգի էր՝ բոլորը միասին, 65 բացի անոնց ծառաներէն եւ աղախիններէն, որոնք եօթը հազար երեք հարիւր երեսունեօթը հոգի էից. անոնց մէջ երկու հարիւր երգիշներ ու երգչուհիներ ալ կային: 66 Անոնց ծիերը՝ եօթը հարիւր երեսունվեց, զորինները՝ երկու հարիւր քառասունհինգ, 67 ուղտերը՝ չորս հարիւր երեսունհինգ, եւ էշերը՝ վեց հազար եօթը հարիւր քսան հատ էին:

68 Նահապետներէն ոմանք, երբ երուսաղէմ եղող Տէրոջ տունը հասան, Աստուծոյ տան յօժարակամ ընծաներ տուին, որպէսզի զայն իր վայրին վրայ վերականգնեն: 69 Անոնք՝ իրենց կարողութեան համեմատ՝ վաթսունմէկ հազար դրամ ոսկի, հինգ հազար մնաս արծաթ, ու հարիւր քահանայական պատմուճան տուին գործին գանձին: 70 Քահանաները, Ղետացինները, ժողովուրդէն եղողները, երգողները, դռնապաններն ու Նաթանայիմները իրենց քաղաքները բնակեցան. ամբողջ Խրայէլը իր քաղաքներուն մէջ հաստատուեցաւ:

* Այսինքն՝ տաճարին ծառայութեան Հնծայուածները

† Եբր.՝ բարձրացողները

‡ Այսինքն՝ հայրերուն տունը

§ Եբր.՝ զգուելի

¤ Կամ՝ Աթարսաթա

¤ Եբր.՝ կայնեցնեն

3

Երբ եօթներորդ ամիսը հասաւ, մինչ հսրայէլի որդիները **իրենց** քաղաքներուն մէջ էին, ժողովուրդը Երուսաղէմի մէջ հաւաքուեցաւ մէկ մարդու պէս: **2** Յովսեղեկեան Յեսու եւ անոր քահանայ եղբայրները, նաեւ Սաղաթիէլեան Զօրաբարէլ ու անոր եղբայրները կանգնեցան եւ հսրայէլի Աստուծոյն զոհասեղանը կառուցանեցին, որպէսզի անոր վրայ ողջակէզներ մատուցանեն, ինչպէս Աստուծոյ մարդուն՝ Մովսէսի Օրէնքի **գիրքին** մէջ գրուած է: **3** Զոհասեղանը իր “հիմերուն վրայ հաստատեցին, թէեւ այդ երկիրներուն ժողովուրդներէն կը վախճային”, եւ անոր վրայ Տէրոց ողջակէզներ մատուցանեցին – առտուան ու իրիկուան ողջակէզները: **4** Ապա Տաղաւարներու տօնը կատարեցին՝ գրուածին համաձայն, եւ օրական ողջակէզները **մատուցանեցին**՝ **իրենց** թիւով, սովորութեան համաձայն, ամէն օրուան հրամայուածին համեմատ: **5** Անկէ ետք՝ մշտատեւ ողջակէզը **մատուցանեցին**, նաեւ “ամսագլուխներու եւ Տէրոց համար սրբացուած բոլոր հանդիսաւոր տօներուն ողջակէզները, եւ այն յօժարակամ ընծաները՝ որոնք ամէն մարդ յօժարակամ Տէրոց կ'ընծայէր: **6** Եօթներորդ ամսուան առաջին օրէն սկսան Տէրոց ողջակէզներ մատուցանել. բայց Տէրոց տաճարին հիմը **տակալին** դրուած չէր: **7** Ջարակոփներուն ու հիւսներուն դրամ տուին, իսկ Սիդոնացիներուն եւ Տիրացիներուն՝ ուտելիք ու խմելիք եւ իւղ, որպէսզի Լիբանանէն մայրիի փայտեր բերեն Յոպակի ծովը, Պարսկաստանի Կիւրոս թագաւորէն իրենց ունեցած արտօնութեան համաձայն:

8 Անոնց Երուսաղէմ՝ Աստուծոյ տունը գալուն երկրորդ տարուան երկրորդ ամսուան մէջ, Սաղաթիէլեան Զօրաբարէլ, Յովսեղեկեան Յեսու, եւ իրենց եղբայրներուն՝ քահանաներուն եւ Ղետացիներուն մնացորդը, ու բոլոր գերութենէն Երուսաղէմ Դերադարձողները սկսան **տաճարը կառուցանել**. քսան տարեկանէն վեր եղող Ղետացիները վերակացու **նշանակեցին** Տէրոց տան գործին վրայ: **9** Յեսու, անոր որդիներն ու եղբայրները, Կադմիէլ եւ անոր որդիները, **Ղետացիները**, **Աաեւ Ենադադի որդիները**, անոնց որդիներն ու եղբայրները՝ Ղետացիները, մէկ **մարդու** պէս կայնեցան՝ Տէրոց տան մէջ **աշխատող** գործաւորներուն վրայ վերակացու ըլլալու:

10 Երբ կառուցանողները Տէրոց տաճարին հիմը դրին, **իրենց պատմուճանները** հագած քահանաները **տեղաւորեցին**՝ փողերով, նաեւ Ղետացիները՝ Ասափի որդիները՝ ծնծղաներով, որպէսզի Տէրը գովաբանեն՝ Դաւիթ թագաւորին Ակարգադրութեան

^ա **Կամ** վայրին

^բ **Եբր.**՝ ժողովուրդներուն ահը իրենց վրայ էր

^գ **Եբր.**՝ նոր լուսիններու

^դ **Եբր.**՝ եկողները

^ե **Եբր.**՝ կայնեցուցին

^գ **Եբր.**՝ Ովդուիայի

^է **Եբր.**՝ կայնեցուցին

^լ **Եբր.**՝ ձեռքին

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՅԸ

համաձայն: **11** *Տէրը գովաբանելով եւ իրմէ շնորհակալ ըլլալով՝ անոնք իրարու կը պատասխանէին. «Որովհետեւ բարի է, որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է իսրայէլի հանդէպ»: Ամբողջ ժողովուրդը մեծ գոչիւնով կը գոռար, երբ Տէրը կը գովաբանէին *Տէրոց տան հիմնադրութեան համար:**

12 Թահանաներէն, Ղետացիներէն ու նահապետներէն շատեր, որոնք ծեր ըլլալով *Տէրոց նախկին տունը տեսեր էին, բարձր ձայնով լացին՝ երբ իրենց աշքերուն առջեւ այս տան հիմը դրուեցաւ. շատեր **իրենց** ուրախութենէն բարձրածայն գոռացին: **13** ժողովուրդը ուրախութեան գոչիւնին ձայնն ու բազմութեան լացի ձայնը իրարմէ չէր կրնար զանազանել. արդարեւ բազմութիւնը մեծ գոչիւնով կը գոռար, եւ ձայնը հեռուէն կը լսուէր:*

ՏԱՅԱՐԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՄՈՒԹԻՒՆ

4

Երբ Յուդայի ու Բենիամինի թշնամիները լսեցին թէ “տարագրութենէն վերադարձողները” *Տէրոց՝ իսրայէլի Աստուծոյն տաճարը կը կառուցանեն, 2 Զօրաբարէլի ու նահապետներուն ներկայացան եւ անոնց ըսին. «Մենք ալ ծեզի հետ կառուցանենք. արդարեւ մենք ալ ծեզի պէս ծեր Աստուածը կը փնտռենք, ու մեզ հոս բերող Ասորեստանի Ասորդան թագաւորին օրերէն ի վեր անոր զոհ կը մատուցանենք»: **3** Բայց Զօրաբարէլ, Յետու եւ իսրայէլի նահապետներուն մնացորդը անոնց ըսին. «Դուք մեզի հետ ո՛չ մէկ գործ ունիք՝ մեր Աստուծոյն տուն մը կառուցանելու համար. հապա միայն մենք պիտի կառուցանենք *Տէրոց՝ իսրայէլի Աստուծոյն տունը, ինչպէս Պարսկաստանի թագաւորը – Կիւրոս թագաւորը – մեզի պատուիրեց»: **4** Ուստի այդ երկրին ժողովուրդը Յուդայի ժողովուրդին ձեռքերը թուցուց, ու զանոնք շփոթեցուց՝ որ չկառուցանեն: **5** Անոնց ծրագիրը ձախողեցնելու համար՝ անոնց դէմ խորհրդականները վարձեցին Պարսկաստանի Կիւրոս թագաւորին բոլոր օրերը, եւ մինչեւ Պարսկաստանի Դարեհ թագաւորին թագաւորութիւնը: **6** Ասուերոսի թագաւորութեան ատեն, անոր թագաւորութեան սկիզբը, Հրէաստանի ու Երուսաղէմի բնակիչներուն դէմ ամբաստանագիր գրեցին:**

7 Արտաշէսի օրերը՝ Բեսեղամ, Միթրիդատ, Տարէէլ եւ իրենց մնացեալ ընկերները Պարսկաստանի Արտաշէս թագաւորին գրեցին: *Տեղեկագիրը ասորական գիրերով գրուած էր, ու մեկնութիւնը ասորերէն էր: **8** Հռէում հրամանատարը եւ Սամսայ ատենադպիրը Երուսաղէմի դէմ սա՛ կերպով նամակ մը գրեցին Արտաշէս թագաւորին:*

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՄՈՒԹԻՒՆ

^բ **Երր.**՝ ձայնը բարձրացնելով

^Ժ **Երր.**՝ ժողովուրդին

^ա **Երր.**՝ տարագրութեան որդիները

^բ **Երր.**՝ բարձրացնող

^գ **Երր.**՝ արամական, **կամ** քաղդէական

^դ **Կամ** թարգմանութիւնը

^բ **Երր.**՝ արամերէն, **կամ** քաղդէարէն

9 (Այն ատեն Հոկում հրամանատարը, Սամսայ ատենադպիրը եւ իրենց մնացեալ ընկերները՝ Դինացիները, Ափարսաթաքացիները, Տարփաղեցիները, Ափերսացիները, Արքուեցիները, Բաբելոնացիները, Շուշանացիները, Դաւեցիները, Եղամացիները, 10 նաեւ մնացեալ ժողովուրդները, որոնք մեծ ու պատուական Ասենափարը փոխադրեց ու Սամարիայի քաղաքներուն մէջ բնակեցուց, եւ ուրիշներ, որոնք Գետին այս կողմը կը գտնուին, եւայլն, ճամակ մը գրեցի՛ց:) 11 Ահաւասիկ այն նամակին պատճէնը, որ իրեն որկեցին.

«Արտաշէս թագաւորին. քու ծառաներդ, Գետին այս կողմը բնակող մարդիկը, եւայլն: 12 Թագաւորը թող գիտնայ թէ քու քովէդ մեզի Պէրադարձող Հրեաները Երուսաղէմ եկան, եւ այդ ըմբոստ ու անիրաւ քաղաքը կը կառուցանեն՝ պարիսպներ Կվերականգնելով եւ հիմեր բնորոգելով: 13 Թագաւորը հիմա թող գիտնայ թէ եթէ այս քաղաքը Վերստին կառուցանուի եւ անոր պարիսպները վերականգնին, անոնք հարկ, տուրք ու մաքս պիտի չվճարեն. այսպէս՝ թագաւորներու եկամուտին վնաս տուած պիտի ըլլաս: 14 Քանի պալատէն բկը ստանանք մեր թոշակը», չէինք կրնար թագաւորին իրաւագրկութեան հանդուրժել. հետեւաբար այս ճամակը դրկեցինք ու թագաւորին գիտցուցինք, 15 որպէսզի քու հայրերուդ Յիշատակութիւններու գիրքին մէջ փնտոուի. արդարեւ այդ Յիշատակութիւններու գիրքին մէջ պիտի գտնես եւ գիտնաս թէ այդ քաղաքը ըմբոստ, թագաւորներուն ու գաւառներուն վնասակար քաղաք մը եղած է, եւ թէ Պիհն ժամանակներէն ի վեր անոր մէջ ընդվզում կազմակերպեր են. հետեւաբար այս քաղաքը աւերակ եղած է: 16 Մենք թագաւորին կը գիտցնենք թէ եթէ այս քաղաքը Վերստին կառուցանուի ու անոր պարիսպները վերականգնին, այս պատճառով Գետին այս կողմը բաժին պիտի չունենաս»:

17 Թագաւորն ալ պատասխան դրկեց Հոկում հրամանատարին, Սամսայ ատենադպիրին, եւ իրենց մնացեալ ընկերներուն՝ որոնք Սամարիայի մէջ ու Գետին միւս կողմը եղող մնացեալ տեղերուն մէջ կը բնակէին, սա՛ խօսքերով.

18 «Ողջո՞յն, եւայլն: Մեզի դրկուած ձեր տեղեկափիրը իմ առջեւս ճշգրտապէս կարդացուեցաւ: 19 Ես հրաման տուի, ու փնտոեցին եւ գտան թէ այդ քաղաքը հին ժամանակներէն ի վեր թագաւորներու դէմ ապստամբեր է, ու անոր մէջ ըմբոստութիւն եւ ընդվզում կազմակերպեր են: 20 Նաեւ Երուսաղէմի մէջ հզօր թագաւորներ եղեր են, որոնք Գետին ամբողջ միւս կողմը եղողներուն վրայ տիրեր են, եւ իրենց հարկ, տուրք ու մաքս վճարուեր է: 21 Հիմա հրաման տուէք որ այդ Կմարդիկը դադրեցնեն քաղաքին

^գ Եբր.՝ բարձրացող

^հ Քաղ.՝ աւարտելով

^ի Քաղ.՝ իրարու միացնելով

^ք Քաղ.՝ կ'աղենք մեր աղը

^ք Եբր.՝ հնադարեան

^ի Քաղ.՝ ըրեր

^լ Քաղ.՝ Խաղաղութիւն

^{իւ} Քաղ.՝ զօրաւոր մարդիկը

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՅԸ

կառուցումը, մինչեւ որ ինձմէ **ուրիշ** հրաման տրուի: **22** Զգուշացէ՛ք որ ասիկա ընելու մէջ չթերանաք, որ չարութիւնը չշատնայ ու թագաւորներուն վնաս չըլլայ»:

23 Հետեւաբար, երբ Արտաշէս թագաւորին տեղեկագիրին պատճէնը Հռէումի, Սամսայ ատենադպիրին եւ անոնց ընկերներուն առջեւ կարդացուեցաւ, արտորալով Երուսաղէմ գացին՝ Հրեաներուն քով, ու բռնութեամբ եւ ոյժով անոնց **կառուցումը** դադրեցուցին: **24** Այն ատեն Երուսաղէմ եղող Աստուծոյ տան գործը դադրեցաւ, ու մինչեւ Պարսկաստանի Դարեհ թագաւորին թագաւորութեան երկրորդ տարին՝ դադրած **մնաց**:

ՏԱՏԱՐԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՎԵՐՍԿՍԻ

5

Երբ Անգէ մարգարէն եւ Աղդովի որդին՝ Զաքարիա մարգարէն հսրայէլի Աստուծոյն անունով մարգարէացան Հրէաստանի ու Երուսաղէմի մէջ եղող Հրեաներուն, **2** Սաղաթիէլեան Զօրաբարէլ եւ Յովսեղեկեան Յեսու կանգնեցան ու Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյ տունը կառուցանել սկսան: Աստուծոյ մարգարէները անոնց հետ ըլլալով՝ անոնց կ'օգնէին:

3 Այդ ատեն **Եփրատ** գետին այս կողմի կուսակալը՝ Թաթանայի, Սաթրաբուզան, եւ իրենց ընկերները անոնց եկան ու անոնց սա՛ ըսին. «Ո՞վ ձեզի հրաման տուաւ, որ այս տունը կառուցանէք եւ այս պարիսպները վերականգնէք»: **4** Ուստի անոնց ըսինք թէ ի՞նչ էին այս շէնքը կառուցանող մարդոց անունները: **5** Բայց Հրեաներուն երէցներուն վրայ էր իրենց Աստուծոյն աչքը, ու անոնք **չկրցան** իրենց **գործը** դադրեցնել՝ մինչեւ որ խնդիրը Դարեհի հասաւ. այն ատեն անոնք տեղեկագիրով պատասխանեցին այս մասին:

6 **Ահաւասիկ** այն նամակին պատճէնը, որ Դարեհ թագաւորին դրկեցին Գետին այս կողմի կուսակալը՝ Թաթանայի, Սաթրաբուզան, եւ իր ընկերները՝ Ափարսաքացիները, որոնք Գետին այս կողմն էին: **7** Անոր նամակ մը դրկեցին, որուն մէջ սա՛ գրուած էր.

8 «Դարեհ թագաւորին շատ բարեւ»: Թագաւորը թող գիտնայ թէ Հրէաստանի գաւառը՝ մեծ Աստուծոյն տունը գացինք. ան մեծ քարերով կը կառուցանուի, եւ **անոր** պատերուն մէջ փայտեր կը դրուին: Այս գործը փութով կը կատարուի, ու անոնց ձեռքով կը յաջողի: **9** Ուստի այդ երէցները հարցաքննեցինք, եւ անոնց սա՛ ըսինք. «Ո՞վ ձեզի հրաման տուաւ, որ այս տունը կառուցանէք ու այս պարիսպները վերականգնէք»: **10** Անոնց անուններն ալ հարցուցինք՝ քեզի գիտցնելու համար, որպէսզի անոնց գլխաւոր մարդոց անունները **քեզի** գրենք: **11** Անոնք մեզի սա՛պէս պատասխանեցին. «Մենք երկինքի ու երկրի Աստուծոյն

^ա **Քաղ.**՝ աւարտէք

^բ **Քաղ.**՝ սա՛ ըսինք

^գ **Քաղ.**՝ կառոյցը

^դ **Քաղ.**՝ զօրաւոր մարդոց

^ե **Քաղ.**՝ խօսք

^գ **Քաղ.**՝ ամէն խաղաղութիւն

^է **Քաղ.**՝ գլորուող

^լ **Քաղ.**՝ զօրաւոր մարդոց

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՅԸ

ծառաներն ենք, եւ շատ տարիներ առաջ կառուցանուած տունը **վերստի՛ց** կը կառուցանենք: Խսրայէլի մեծ թագաւոր մը զայն կառուցանեց եւ աւարտեց. **12** բայց երբ մեր հայրերը երկինքի Աստուածը վրդովեցին, զանոնք Բարելոնի թագաւորին՝ Թաղդէացի Նաբուգոդոնոսորի ձեռքը մատնեց, ան ալ այս տունը փլցուց ու ժողովուրդը Բարելոն տարագրեց: **13** Բայց Բարելոնի Կիւրոս թագաւորին առաջին տարին՝ Կիւրոս թագաւորը հրաման տուաւ որ այս Աստուծոյ տունը կառուցանուի: **14** Աստուծոյ տան ոսկիէ եւ արծաթէ առարկաներն ալ, որ Նաբուգոդոնոսոր Երուսաղէմի տաճարէն դուրս հանելով՝ Բարելոնի տաճարը տարեր էր, Կիւրոս թագաւորը զանոնք Բարելոնի տաճարէն դուրս հանեց ու Սասբասար անունով մէկուն յանձնեց, որ կուսակալ նշանակեր էր, **15** եւ անոր ըսաւ. "Ա՞ն այս առարկաները, գնա՞ ու զետեղէ՛ զանոնք Երուսաղէմ եղող տաճարը, եւ Աստուծոյ տունը իր տեղը թող կառուցանուի": **16** Այն ատեն Սասբասար եկաւ, Երուսաղէմ եղող Աստուծոյ տան հիմը թղրաւ, եւ այդ ատենէն մինչեւ հիմա կը կառուցանուի, բայց չէ աւարտած: **17** Ուստի հիմա, եթէ թագաւորին հաճելի է, հոն՝ Բարելոն եղող թագաւորին գանձատան մէջ թող փնտռուի, թէ արդեօք Կիւրոս թագաւորը հրաման տուե՞ր է որ Երուսաղէմի մէջ այս Աստուծոյ տունը կառուցանուի: Թագաւորը այս մասին իր կամքը թող ՚գիտցնէ մեզի»:

ԿԻՒՐՈՍ ԿԱՅՄՐԻՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ ԿԸ ԳՏՆՈՒԻ

6

Այն ատեն Դարեհ թագաւորը հրաման տուաւ, ու դիւանին մէջ փնտռեցին,— ուր գանձերը կը պահուէին Բարելոնի մէջ,— **2** եւ Մարաստանի գաւառին մէջ եղող ՚Եկրատանայի պալատին մէջ պատատ մը գտնուեցաւ, որուն մէջ սա՛պէս գրուած յիշատակութիւն մը կար.

3 «Կիւրոս թագաւորին առաջին տարին, Կիւրոս թագաւորը Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյ տան մասին հրաման տուաւ որ **այդ** տունը կառուցանուի **այն** տեղը՝ ուր զոհ կը մատուցանէին: Անոր հիմերը ամուր ըլլան, անոր բարձրութիւնը՝ վաթսուն կանգուն, եւ լայնքը՝ վաթսուն կանգուն: **4** Երեք կարգ ՚մեծ քարերէ ու մէկ կարգ նոր փայտէ ըլլայ, եւ անոր ծախսերը թագաւորին տունէն թող վճարուին: **5** Աստուծոյ տան ոսկիէ եւ արծաթէ առարկաներն ալ, որոնք Նաբուգոդոնոսոր Երուսաղէմի տաճարէն դուրս հանեց ու Բարելոն բերաւ, թող վերադարձուին: **հիրաքանչիւրը** իր տեղը թող ՚տարուի՛ Երուսաղէմ եղող տաճարին մէջ. **զանոնք զետեղէ՛ Աստուծոյ տունը»:**

ԴԱՐԵԼ ԿԱՅՄՐԸ ԿԸ ՀՐԱՍՏԱՅԵ ԳՈՐԾԻՆ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

6 «Ուստի հիմա՝ Թաթանայի՛, Գետին միւս կողմի կուսակալը, Սաթրաբուզա՛ն, եւ

^բ **Քաղ.**՝ տուաւ

^ծ **Քաղ.**՝ լաւ

^հ **Քաղ.**՝ ղրկէ

^ս **Քաղ.**՝ Ախմեթայի

^բ **Քաղ.**՝ գլորուտող

^գ **Քաղ.**՝ երթայ

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՅԸ

Ավարասքացիներ, անոնց ընկերները՝ որ Գետին միւս կողմն էք, հեռացէք ատկէ: **7** Թողուցէ՛ք այս Աստուծոյ տան գործը. Հրեաներու կուսակալն ու երէցները թող կառուցանեն այս Աստուծոյ տունը իր տեղը: **8** Նաեւ հրաման կու տամ, **որ գիտնաք թէ** Հրեաներու երէցներուն ի՞նչ պիտի ընէք՝ Աստուծոյ տան կառուցումին համար. **այսինքն՝** թագաւորին “գոյքերէն – Գետին միւս կողմէն **հաւաքուած** հարկէն – այդ եմարդոց ծախսերը անյապաղ թող վճարուին, որպէսզի “գործը չդադրի”: **9** Ի՞նչ որ անոնց պէտք ըլլայ, թէ՝ գուարակներ, թէ՝ խոյեր եւ թէ գառներ՝ երկինքի Աստուծոյն ողջակէզներուն համար, **հաեւ ցորեն**, աղ, գինի ու իւղ,— Երուսաղէմի մէջ եղող քահանաներուն էրահանգին համաձայն,— ամէն օր անոնց թող վճարուի առանց թերացումի, **10** որպէսզի երկինքի Աստուծոյն անուշահոտ **զոհեր** մատուցանեն, ու թագաւորին եւ անոր որդիներուն կեանքին համար աղօթեն: **11** Ես հրաման կու տամ. ո՞վ որ այս **խօսքին ընդդիմանայ**”, անոր տունէն փայտ մը թող քակուի ու տնկուի, ինք անոր վրայ բգամուի, եւ ասոր համար իր տունը աղբիւս ըլլայ: **12** Այն Աստուածը՝ որ իր անունը հոն բնակեցուցեր է, թող տապալէ ամէն թագաւոր ու ժողովուրդ, որ ձեռք կ'երկարէ՝ **այս խօսքին ընդդիմանալու**, եւ Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյ տունը փլցնելու: Ես՝ Դարեհ **այս հրամանը** տուի. թող անյապաղ գործադրուի»:

ՏԱՅԱՐԸ ԿԸ ՆՈՒԻՐՈՒԻՒ

13 Այն ատեն Գետին այս կողմի կուսակալը՝ Թաթանայի, Սաթրաբուզան, եւ իրենց ընկերները Դարեհ թագաւորին դրկած **հրամանը** անյապաղ կատարեցին: **14** Հրեաներուն երէցները կը կառուցանէին ու կը յաջողէին՝ Անգէ մարգարէին ու Աղդովի որդիին՝ Զաքարիայի մարգարէութեամբ. անոնք կառուցանեցին եւ աւարտեցին՝ Խրայէլի Աստուծոյն հրամանին համաձայն, նաեւ Կիլրոսի, Դարեհի ու Պարսկաստանի Արտաշէս թագաւորին հրամանին համաձայն: **15** Այս տունը Աղար ամսուան երրորդ օրը աւարտեցաւ, Դարեհ թագաւորին թագաւորութեան վեցերորդ տարին:

16 Խրայէլի որդիները, քահանաներն ու **Ղետացիները** եւ **Ժարագրութենէն** վերադարձողներուն “մնացորդը, ուրախութեամբ Աստուծոյ տան նաւակատիքը կատարեցին: **17** Աստուծոյ տան նաւակատիքին համար՝ հարիւր գուարակ, երկու հարիւր խոյ, չորս հարիւր գառ, եւ ամբողջ Խրայէլի մեղքի պատարագ ըլլալու համար՝ Խրայէլի տոհմերուն թիւով՝ այծերէն տասներկու քօշ մատուցանեցին: **18** Նաեւ Երուսաղէմի մէջ՝ Աստուծոյ պաշտամունքին համար նշանակեցին քահանաները՝ իրենց ազգատոհմերուն մէջ, ու **Ղետացիները՝** իրենց դասերուն մէջ, ինչպէս Մովսէսի գիրքին մէջ գրուած է:

^Դ **Կամ՝** հարստութենէն

^Ե **Քաղ.**՝ գօրաւոր մարդոց

^Գ **Քաղ.**՝ չդադրին

^Դ **Քաղ.**՝ խօսքին

^Ե **Քաղ.**՝ խօսքը փոխէ

^Վ **Քաղ.**՝ զարնուի

^Հ **Եբ.**՝ տարագրութեան որդիներուն

19 ^հՏարագրութենէն վերադարձողները՝ “առաջին ամսուան տասնչորրորդ օրը կատարեցին Զատիկը: **20** Ջանի քահանաներն ու Ղետացիները՝ ‘միասին սրբացան’ ու բոլորն ալ մաքուր եղան, զատիկը մորթեցին բոլոր տարագրութենէն վերադարձողներուն համար, քահանաներուն համար, եւ իրենց համար: **21** Տարագրութենէն վերադարձող հսրայէլի որդիները **զայն** կերան, նաեւ բոլոր անոնք, որ **Տէրը՝ հսրայէլի Աստուածը** փնտոելու համար անոնց **եկած էին**, զատուելով **այդ** երկրին ազգերուն անմաքրութենէն: **22** Եօթը օր Բաղարջակերքի տօնը կատարեցին ուրախութեամբ. արդարեւ **Տէրը** զանոնք ուրախացուցած էր՝ Ասորեստանի թագաւորին սիրտը իրենց **կողմը** դարձնելով, որպէսզի Աստուծոյ – հսրայէլի Աստուծոյն – տան գործին մէջ իրենց ^ևօգնէ:

ԵԶՐԱ ԿԸ ՀԱՍՆԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ

7

Այս բաներէն ետք, Պարսկաստանի թագաւորին՝ Արտաշէսի թագաւորութեան ատենը, Եզրաս – որդին **Սարայիայի**, որդին **Ազարիայի**, որդին **Զեղկիայի**, **2** որդին **Սեղումի**, որդին **Սադովկի**, որդին **Աքիտովբի**, **3** որդին **Ամարիայի**, որդին **Ազարիայի**, որդին **Սարիոթի**, **4** որդին **Զարիայի**, որդին **Ոզիի**, որդին **Բոկկիի**, **5** որդին **Աբիսուայի**, որդին **Փենեհէսի**, որդին **Եղիազարի**, որդին **Ահարոն** աւագ քահանային –, **6** այս Եզրասը Բաբելոնէն բարձրացաւ. ան արագագիր դպիրն էր **Մովսէսի Օրէնքին**, որ **Տէրը՝ հսրայէլի Աստուածը** տուեր էր: Թագաւորը անոր “շնորհեց ամէն ինչ որ պահանջեր էր, որովհետեւ **Տէրոց՝ իր Աստուծոյն ճեռքը** իր վրան էր: **7** (Արտաշէս թագաւորին եօթներորդ տարին՝ հսրայէլի որդիներէն, քահանաներէն ու Ղետացիներէն, երգողներէն, դոնապաններէն եւ Նաթանայիմներէն **ումանք** երուսաղէմ բարձրացան:) **8** ԱԱ հինգերորդ ամիսը Երուսաղէմ հասաւ, թագաւորին եօթներորդ տարին: **9** Արդարեւ առաջին ամսուան առաջին **օրը** Բաբելոնէն **բմեկնեցաւ**, եւ Աստուծոյ բարի ճեռքը անոր վրայ ըլլալով՝ հինգերորդ ամսուան առաջին **օրը** Երուսաղէմ հասաւ. **10** որովհետեւ Եզրաս իր սիրտը **տրամադրած** էր՝ որպէսզի **Տէրոց Օրէնքը** փնտոէ ու գործադրէ, եւ կանոններն ու **Դատավճիռները** սորվեցնէ հսրայէլի մէջ:

ԱՐՏԱՇԵՍ ԿԱՅՍՐԻՆ ԵԶՐԱՍԻ ՏՈՒԱԾ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

11 Ահա՛ւասիկ այն տեղեկագիրին պատճէնը, որ **Արտաշէս թագաւորը** տուաւ Եզրաս

^հ **Եբր.**՝ Տարագրութեան որդիները

^ւ **Եբր.**՝ **մէկ մարդու** պէս մաքրուեցան

^{իւ} **Եբր.**՝ ճեռքերը ուժովցնէ

^{աւ} **Եբր.**՝ տուաւ

^բ **Կամ**՝ սկսաւ բարձրանալ

^գ **Եբր.**՝ պատրաստած

^դ **Կամ**՝ սովորութիւնները

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՅԸ

քահանային **ու** դպիրին, որ **Տէրոց** “պատուիրած խօսքերուն” գրողն էր, նաեւ անոր կանոններուն՝ իսրայէլի **տրուած**:

12 «Թագաւորներու թագաւորը՝ Արտաշէս, Եզրաս քահանային, երկինքի Աստուծոյն Օրէնքին դպիրին, կատարեալ **խաղաղութիւն**, եւայլն: **13** Հրաման կու տամ, որ իմ թագաւորութեանս մէջ եղող իսրայէլի ժողովուրդէն եւ անոր քահանաներէն ու Ղետացիներէն բոլոր յօժարակամ Երուսաղէմ գացողները՝ քեզի հետ երթան: **14** Արդարեւ դուն թագաւորին ու անոր եօթը խորհրդականներուն **պատուած** կը դրկուիս, որպէսզի Հրէաստանը եւ Երուսաղէմը քննարկես՝ քու ձեռքդ եղած Աստուծոյդ Օրէնքին համաձայն, **15** եւ տանիս այն արծաթն ու ոսկին՝ որ թագաւորը եւ իր խորհրդականները յօժարակամ **ընծայեցին** իսրայէլի Աստուծոյն, – որուն բնակարանը Երուսաղէմի մէջ է, – **16** նաեւ բոլոր արծաթն ու ոսկին՝ որ Բաբելոնի ամբողջ գաւառին մէջ պիտի գտնես, ժողովուրդին ու քահանաներուն յօժարակամ **ընծային** հետ, որ կը մատուցանեն Երուսաղէմի մէջ եղող իրենց Աստուծոյն տան: **17** Ուրեմն այդ դրամով անյապաղ զուարակներ, խոյեր ու գառներ գնէ, նաեւ անոնց **հացի** ընծաներն ու թափելիք նուէրները, եւ զանոնք մատուցանէ՝ Երուսաղէմ եղող ձեր Աստուծոյն տան զոհասեղանին վրայ. **18** իսկ մնացած արծաթով ու ոսկիով՝ ինչ որ քեզի ու եղբայրներուդ պատշաճ թուի՝ ընել, ըրէ՛ք զայն՝ ձեր Աստուծոյն կամքին համաձայն: **19** Այն առարկաները՝ որ քու Աստուծոյդ տան պաշտամունքին համար քեզի տրուեցան, **զետեղէ՝ զանոնք** Երուսաղէմի Աստուծոյն առցեւ: **20** Ուրիշ ինչ որ քու Աստուծոյդ տան համար հարկաւոր է ու քեզի **զկը պատշաճի**՝ տալ, տուր զայն թագաւորին գանձատունէն: **21** Ու ես, Արտաշէս թագաւորս, հրաման կու տամ **ձեզի**՝ Գետին միւս կողմը եղող բոլոր գանձապետներուդ, որ անյապաղ կատարէք ինչ որ Եզրաս քահանան, երկինքի Աստուծոյն Օրէնքին դպիրը, ձեզմէ խնդրէ. **22** առանց **հաշուելու** **տուէ՛ք** մինչեւ հարիւր տաղանդ արծաթ, հարիւր քոռ ցորեն, հարիւր մար գինի, հարիւր մար իւղ, եւ ա՞ղ: **23** ինչ որ երկինքի Աստուածը հրամայեր է՝ թող փութաջանութեանք գործադրուի երկինքի Աստուծոյն տան համար, որպէսզի թագաւորին եւ անոր որդիներուն թագաւորութեան վրայ զայրոյթ չըլլայ: **24** Ձեզի կը գիտցնենք թէ բոլոր քահանաներէն, Ղետացիներէն, երգողներէն, դռնապաններէն, Նաթանայիմներէն եւ այս Աստուծոյ տան սպասարկուներէն հարկ, տուրք ու մաքս առնելու հրաման չկայ: **25** իսկ դուն, **ո՞վ** Եզրաս, քու Աստուծոյդ իմաստութեամբ՝ որ ձեռքդ ունիս, դատաւորներ եւ իշխաններ նշանակէ, որ Գետին միւս կողմը եղող ամբողջ ժողովուրդը դատեն, այսինքն բոլոր անոնք՝ որ քու Աստուծոյդ Օրէնքը գիտեն. չգիտցողներուն ալ սորվեցուցէ՛ք: **26** Ո՞վ որ քու Աստուծոյդ Օրէնքն ու թագաւորին օրէնքը չգործադրէ՝ անյապաղ **թող դատապարտուի**, կամ մահուան, կամ աքսորի, կամ գոյքերու գրաւումի, կամ ալ բանտարկութեան»:

^բ **Երը.**՝ պատուիրաններուն խօսքերուն

^գ **Երը.**՝ առցեւէն

^է **Քաղ.**՝ լաւ ըլլայ

^լ **Քաղ.**՝ հատուցանէ՝

^թ **Քաղ.**՝ կ'ինայ

^ժ **Քաղ.**՝ գրելու

^ի **Քաղ.**՝ անոր դատաստանը թող գործադրուի

27 Օրինեալ ըլլայ Տէրը՝ մեր հայրերուն Աստուածը, որ Երուսաղէմի մէջ եղող Տէրոց տունը՝ ‘զարդարելու համար’ այսպիսի փափաք դրաւ թագաւորին սիրտին մէջ: **28** Ինծի կարեկցութիւն “ցոյց տուաւ” թագաւորին, անոր խորհրդականներուն ու թագաւորին բոլոր զօրաւոր իշխանաւորներուն առջեւ. Տէրոց՝ իմ Աստուծոյս ձեռքը իմ վրաս ըլլալով՝ ուժովցայ, եւ իսրայէլէն գլխաւոր մարդիկ հաւաքեցի՝ որպէսզի ինծի հետ բարձրանան:

ՏԱՐԱԳՐՈՒԹԵՆԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

8

Ահա՛ւասիկ Արտաշէս թագաւորին թագաւորութեան ատենը՝ ինծի հետ բարելոնէն բարձրացող ներուն նահապետներն ու ազգահամարը.— **2** Փենեհէսի որդիներէն՝ Գերսոն. Իթամարի որդիներէն՝ Դանիէլ. Դասիթի որդիներէն՝ Քետսուս. **3** Սեքենիայի որդիներէն՝ Փարոսի որդիներէն՝ Զաքարիա, եւ անոր հետ՝ ազգահամարի մէջ արձանագրուած հարիւր յիսուն “այր մարդ”. **4** Փահաթ-Մովաբի որդիներէն՝ Զարիայի որդին՝ Եղիովենայի, եւ անոր հետ՝ երկու հարիւր այր մարդ. **5** Սեքենիայի որդիներէն՝ Յազիէլի որդին, եւ անոր հետ՝ երեք հարիւր այր մարդ. **6** Աղինի որդիներէն՝ Յովնաթանի որդին՝ Արեն, եւ անոր հետ՝ յիսուն այր մարդ. **7** Եղամի որդիներէն՝ Գոթողիայի որդին՝ Եսայի, եւ անոր հետ՝ Եօթանասուն այր մարդ. **8** Սափատիայի որդիներէն՝ Միքայէլի որդին՝ Զաքարիա, եւ անոր հետ՝ ութսուն այր մարդ. **9** Յովաբի որդիներէն՝ Յեքիէլի որդին՝ Արդիա, եւ անոր հետ՝ երկու հարիւր տասնութ այր մարդ. **10** Սաղոմիդի որդիներէն՝ Յոսեփիայի որդին, եւ անոր հետ՝ հարիւր վաթսուն այր մարդ. **11** Բերայիի որդիներէն՝ Բերայիի որդին՝ Զաքարիա, եւ անոր հետ՝ քսանութ այր մարդ. **12** Ազգադի որդիներէն՝ Ակատանի որդին՝ Յոհանան, եւ անոր հետ՝ հարիւր տասը այր մարդ. **13** Աղոնիկամի որդիներէն՝ Վերջինները, ահա՛ւասիկ անոնց անունները.— Եղիփաղէտ, Յէիէլ ու Սեմայիա, եւ անոնց հետ՝ վաթսուն այր մարդ. **14** Բագուէի որդիներէն՝ Ութայի ու Զաքուտ, եւ անոնց հետ՝ Եօթանասուն այր մարդ:

ԵԶՐԱՍ ԴԵՒՏԱՑԻՆԵՐ ԿԸ ԳՏՆԵ ՏԱՃԱՐԻՆ ՀԱՄԱՐ

15 Ասոնք դէպի Ահավա բհոսող գետին եզերքը հաւաքեցի, ու հոն երեք օր բանակեցանք: Ժողովուրդին ու քահանաներուն “ուշադրութիւն դարձուցի”, ու հոն Ղետացիներու որդիներէն ո՛չ մէկը գտայ: **16** Այն ատեն կանչել տուի գլխաւոր մարդիկը՝ Եղիազար, Արիէլ, Սեմայիա, Եղնաթան, Հարիս, Եղնաթան, Նաթան, Զաքարիա ու

¹ Կամ՝ փառաւորելու

² Եբր.՝ երկարեց

³ Եբր.՝ զօրաւոր մարդիկ

⁴ Եբր.՝ արու

⁵ Եբր.՝ գացող

⁶ Եբր.՝ Ակատեցի

⁷ Քաղ.՝ զօրաւոր մարդիկը

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՅԸ

Մեսուղամ, եւ խելացի մարդիկը՝ Յովարիբ ու Եղնաթան, **17** եւ զանոնք Քասիփիա կոչուած տեղին գլխաւորին՝ Աղդովի հրկեցի: Աղդովի եւ անոր Եղբայրներուն՝ Քասիփիա կոչուած տեղը եղող Նաթանայիմներուն ըստելիք խօսքերը անոնց բերանը դրի, որպէսզի մեր Աստուծոյն տան համար մեզի սպասարկուներ բերեն: **18** Քանի մեր Աստուծոյն բարի ձեռքը մեր վրայ էր, Խորայէլեան Ղեփի որդիին՝ Մոհողիի որդիներէն ուշիմ մարդ մը բերին մեզի, **այսինքն՝** Սարաբիան, անոր որդիներն ու Եղբայրները, տասնութ հոգի. **19** նաեւ Ասաբիան, եւ անոր հետ՝ Մերարիի որդիներէն՝ Եսային, անոր Եղբայրներն ու անոնց որդիները՝ քսան հոգի. **20** Նաթանայիմներէն ալ, որոնք Դաւիթ եւ իր իշխանաւորները Ղետացիներու ծառայութեան յատկացուցեր էին, երկու հարիւր քսան Նաթանայիմ. իրենցմէ բոլորն **ալ** անուններով որոշուած էին:

ԵԶՐԱՍ Կ'ԱՌԱՋՆՈՐԴԷ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԾՈՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՂՕԹՁԻ

21 Հոն՝ Ահավայի գետին քով՝ ծոմապահութիւն յայտարարեցի, որպէսզի խոնարհինք Տէրոց՝ մեր Աստուծոյն առջեւ, եւ իրմէ յաջող ճամբորդութիւն խնդրենք մեզի, մեր մանուկներուն ու մեր ամբողջ ինչքին համար: **22** Արդարեւ ամչցայ թագաւորէն գօրագունդ ու ձիաւորներ խնդրել՝ ճամբային մէջ մեզ թշնամիներէն պաշտպանելու՝ համար, որովհետեւ թագաւորին ըսեր էինք. «Մեր Աստուծոյն ձեռքը բոլոր զինք փնտողներուն վրայ է՝ բարիքի համար, իսկ իր գօրութիւնն ու բարկութիւնը բոլոր զինք լքողներուն դէմ են»: **23** Ուստի ծոմ պահեցինք, եւ ասոր համար մեր Աստուծոյն թախանձեցինք. ան ալ մեր թախանձանքը ընդունեց:

ՆՈՒԷՐՆԵՐ ՏԱՃԱՐԻՆ ՀԱՄԱՐ

24 Քահանաներու պետերէն տասներկու մարդ զատեցի – Սարաբիան, Ասաբիան, ու անոնց հետ՝ իրենց Եղբայրներէն տասը մարդ –, **25** եւ անոնց **առջեւ** կշռեցի արծաթը, ոսկին ու առարկաները, **այսինքն՝** թագաւորին, անոր խորհրդականներուն եւ իշխանաւորներուն, ու **հոն** գտնուող ամբողջ Խորայէլի մատուցանած **ընծաները՝** մեր Աստուծոյն տան համար: **26** Նաեւ անոնց ձեռքներուն մէջ կշռեցի վեց հարիւր յիսուն տաղանդ արծաթ, հարիւր տաղանդ արծաթէ առարկաներ, հարիւր տաղանդ ոսկի, **27** հազար դրամ **արժող** քսան ոսկի ըմպանակ, եւ գեղեցիկ, փայլուն, ոսկիի պէս **թանկագին** պղինձէ երկու անօթ: **28** Անոնց ըսի. «Դուք Տէրոց սրբացած էք, **այս** առարկաներն ալ սուրբ են, իսկ արծաթն ու ոսկին յօժարակամ ընծայ են Տէրոց՝ ձեր հայրերուն Աստուծոյն: **29** Հսկեցէք ու պահեցէք **զանոնք**, մինչեւ որ **զանոնք** երուսաղէմ կշռէք՝ Տէրոց տան

^բ **Եբր.**՝ դուրս հանեցի

^գ **Եբր.**՝ տուեր

^է **Եբր.**՝ ուղիղ

^լ **Եբր.**՝ թշնամիին դէմ մեզի օգնելու

^թ **Եբր.**՝ բարձրացուցած

^ժ **Եբր.**՝ բարձրացնելիք ընծաները

^ի **Եբր.**՝ ցանկալի

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՅԸ

սենեակներուն մէջ, քահանաներուն, Ղետացիներու պետերուն եւ Խրայէլի Շահապետներուն առջեւ»: **30** Ուստի քահանաներն ու Ղետացիները արծաթը, ոսկին եւ առարկաները կշիռով ստացան, որպէսզի Երուսաղէմ մեր Աստուծոյն տունը տանին:

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԵՐՈՒՍԱՂԷՄ

31 Առաջին ամսուան տասներկրորդ **օրը** Ահավայի գետէն մեկնեցանք՝ Երուսաղէմ երթալու համար. մեր Աստուծոյն ձեռքը մեր վրայ էր, ու մեզ ճամբան թշնամին ու դարանակալին ձեռքէն ազատեց: **32** Երբ Երուսաղէմ հասանք, հոն երեք օր մնացինք: **33** Չորրորդ օրը՝ արծաթը, ոսկին եւ առարկաները մեր Աստուծոյն տան մէջ կշռուեցան Ուրիա քահանային որդիին՝ Մերամոթի ձեռքով: Անոր հետ էր Փենեհէսի որդիին՝ Եղիազար, եւ անոնց հետ էին թեսուի որդին՝ Յովզաբադ, ու Բանուիի որդին՝ Նովադիա Ղետացիները: **34** Բոլորը թիւով եւ կշիռով **յանձնուեցան**. այն ատեն ամբողջ կշիռը արձանագրուեցաւ:

35 Տարագրութեան որդիները, որոնք գերութենէն վերադարձած էին, Խրայէլի Աստուծոյն ողջակէզներ մատուցանեցին. — ամբողջ Խրայէլի համար՝ տասներկու գուարակ, իննունվեց խոյ, եօթանասունեօթը գառ, **ու** մեղքի պատարագի համար՝ տասներկու քօշ. **ասոնք** բոլորը Տէրոց ողջակէզ **մատուցանեցին**: **36** Անոնք թագաւորին հրովարտակը Գետին այս կողմը եղող թագաւորին սատրապներուն ու կուսակալներուն յանձնեցին, անոնք ալ ժողովուրդին եւ Աստուծոյ տան նեցուկ եղան:

ԵԶՐԱՍ ԿԸ ՍԵՐՏԸ ԽԱՌ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՁԸ

9

Երբ այս **բաները** աւարտեցան, իշխանաւորները ինձի մօտեցան եւ ըսին. «Խրայէլի ժողովուրդը, քահանաներն ու Ղետացիները **այս** երկիրներուն ժողովուրդներէն չզատուեցան, հապա անոնց գարշութիւններուն նմանները **կը գործեմ, այսինքն՝** Քանանացիներուն, Թետացիներուն, Փերեզացիներուն, Յերուսացիներուն, Ամմոնացիներուն, Մովզաբացիներուն, Եգիպտացիներուն եւ Ամորհացիներուն **նման**: **2** Արդարեւ իրենց համար ու իրենց որդիներուն համար անոնց աղջիկներէն **կին** առին, եւ սուրբ զարմը **այս** երկիրներուն ժողովուրդներուն հետ խառնուեցաւ. «իշխանաւորներն ու ատենակալները առաջինները եղան» այս ուխտազանցութեան **մէջ»:** **3** Երբ այս բանը լսեցի, հագուստս եւ պարեգօտս պատուեցի, գլուխիս ու մօրուքիս մազերը փետեցի, եւ ապշած նստայ: **4** Այն ատեն տարագիրներուն ուխտազանցութեան պատճառով Խրայէլի Աստուծոյն խօսքերէն բոլոր ^բվախցողները իմ քովս հաւաքուեցան, ու ես մինչեւ իրիկուան ընծային **ատենը** ապշած նստայ: **5** Իրիկուան ընծային **ատենը՝** թախսիծս կանգնեցայ, պատուած հագուստովս ու պարեգօտովս ծնրադրեցի, ձեռքերս դէպի Տէրը՝ իմ Աստուածս տարածեցի, **6** եւ ըսի. «Իմ Աստուածս, կ'ամշնամ ու կը խանիմ՝ որ երեսս քեզի վերցնեմ, ո'վ իմ Աստուածս. արդարեւ մեր անօրէնութիւնները մեր գլուխէն վեր գարձրացան, ու մեր

¹ **Այսինքն՝** հայրերու պետերուն

² **Եբր.**՝ իշխանաւորներուն եւ ատենակալներուն ձեռքը առաջինը եղաւ

³ **Եբր.**՝ դողացողները

⁴ **Եբր.**՝ շատցան

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՅԸ

յանցանքը մինչեւ երկինք ՚ելաւ: **7** Մեր հայրերուն օրերէն ի վեր մենք մեծ յանցանքի մէջ ենք մինչեւ այսօր, եւ մեր անօրէնութիւններուն համար՝ մենք, մեր թագաւորներն **ու** մեր քահանաները օտար երկիրներու թագաւորներուն ձեռքը մատնուեցանք՝ սուրի, գերութեան, կողոպուտի ու երեսի ամօթի, ինչպէս այսօր **Կ'ԵՐԵՒՅԱՅ:** **8** Իսկ հիմա, քիչ մը ատեն, **Տէրը՝** մեր Աստուածը ողորմեցաւ, մեզի ազատածներ թողուց եւ իր սուրբ տեղին մէջ մեզի ՚պատսպարան մը տուաւ, որպէսզի մեր Աստուածը մեր աչքերը լուսաւորէ ու մեր ստրկութեան մէջ մեզի քիչ մը կենսունակութիւն տայ: **9** Արդարեւ մենք ստրուկ էինք, բայց մեր Աստուածը մեզ չլքեց մեր ստրկութեան մէջ. հապա Պարսկաստանի թագաւորներուն առջեւ մեզի կարեկցութիւն “ցոյց տուաւ”, որպէսզի մեզի կենսունակութիւն տայ՝ մեր Աստուածոյն տունը Հվերականգնելու, անոր աւերակները Շնորոգելու, եւ մեզի Հրէաստանի մէջ ու Երուսաղէմի մէջ պատ մը տալու: **10** Ուստի հիմա, ո՞վ մեր Աստուածը, ասկէ ետք ի՞նչ ըսենք, որովհետեւ լքեցինք քու պատուիրաններդ, **11** որոնք քու ծառաներուդ՝ մարգարէներուն Ռմիջոցով հրամայեցիր եւ ըսիր. “Այն երկիրը, ուր պիտի մտնէք՝ անոր տիրանալու համար, կեղտոտած երկիր մըն է՝ երկիրներու ժողովուրդներուն կեղտոտութիւններով. իրենց գարշութիւններով եւ իրենց անմաքրութեամբ զայն ծայրէ ծայր լեցուցած են: **12** Ուրեմն ձեր աղջիկները անոնց որդիներուն մի՛ տաք, անոնց աղջիկները ձեր որդիներուն համար մի՛ առնէք, ու երբեք անոնց խաղաղութիւնը եւ բարօրութիւնը մի՛ փնտուէք. որպէսզի ուժովնաք, **այդ** երկրին բարիքը ուտէք, եւ ձեր որդիները յախտեան **անոր** տիրանան: **13** Մեր չար գործներուն համար ու մեր մեծ յանցանքին համար այս բոլոր բաներուն մեր վրայ հասնելէն ետք, (թէպէտ դո՛ւն, **ո՞վ** մեր Աստուածը, **մեզ** ՚չպատճեցիր մեր անօրէնութիւններուն համեմատ”, հապա մեզի այսպիսի ազատում մը տուիր), **14** պէ՞տք էր որ դարձեալ քու պատուիրաններդ ՚անտեսէինք եւ այս գարշելի ազգերուն խնամի ըլլայինք. միթէ դուն մեզի դէմ պիտի չբարկանայի՞ր ու մեզ պիտի չսպառէի՞ր, մինչեւ որ **մեզմէ** մնացորդ եւ ազատած չըլլար: **15** Ո՞վ **Տէր**, հսրայէլի՛ Աստուած, դուն արդար ես, որովհետեւ մենք մինչեւ այսօր մնացած ենք՝ **իբր** ազատած. ահա՛ մենք մեր յանցանքով քու առջեւդ ենք, թէպէտ այս պատճառով չենք կրնար քեզի ներկայանալ»:

ԽԱՌՆ ԱՍՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՋԱՑՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

10

^Դ **ԵԲԲ.**՝ մեծցաւ

^Ե **ԵԲԲ.**՝ ցից

^Գ **ԵԲԲ.**՝ երկարեց

^Դ **ԵԲԲ.**՝ բարձրացնելու

^Ե **ԵԲԲ.**՝ կայնեցնելու

^Բ **ԵԲԲ.**՝ ձեռքով

^Ճ **ԵԲԲ.**՝ մեր անօրէնութիւններէն պակաս արգիլեցիր

^Հ **ԵԲԲ.**՝ խզէինք

^Լ **ԵԲԲ.**՝ գարշութիւններու

ԵԳՐԱՍԻ ԳԻՐՅԸ

Մինչ Եգրաս կ'աղօթէր եւ կը խոստովանէր, լալով ու "Երկրպագելով Աստուծոյ տան առջեւ, հսրայէլէն յոյժ մեծ համախմբում մը – մարդիկ, կիներ ու զաւակներ – անոր քով հաւաքուեցաւ, եւ ժողովուրդը յոյժ շատ" լացաւ: **2** Այն ատեն Եղամի որդիներէն Յեքիկի որդին՝ Սեքենիա Եգրասի պատասխանելով ըսաւ. «Մենք մեր Աստուծոյն հանդէպ ուխտազանց եղանք ու Երկրին ժողովուրդներէն օտարազգի կիներ առինք. բայց հիմա այս մասին յոյս կայ հսրայէլի համար: **3** Հիմա մեր Աստուծոյն հետ ուխտ կնքենք, որ բոլոր կիներն ու անոնցմէ ծնածները ու արձակենք՝ իմ տիրոջս ու մեր Աստուծոյն պատուիրանէն եվախցողներուն հրահանգին համաձայն. եւ **ասիկա** Օրէնքին համաձայն թող գործադրուի: **4** Կանգնէ՛, որովհետեւ այս խնդիրը քեզի **Կը Վերաբերի.** մենք ալ քեզի հետ կ'ըլլանք: Ուժովցի՛ եւ կատարէ՛»:

5 Եգրաս կանգնեցաւ, ու քահանաներու պետերուն, Դեւտացիներուն եւ ամբողջ հսրայէլի երդում ընել տուաւ, որ այդ ըսուածը գործադրեն. անոնք ալ երդում ըրին: **6** Եգրաս Աստուծոյ տան առջեւէն կանգնեցաւ, ու Եղիասիրի որդիին՝ Յոհանանին սենեակը գնաց: Հոն մտնելով հաց չկերաւ եւ ջուր չխմեց, որովհետեւ տարագիրներուն ուխտազանցութեան համար կը սգար: **7** Հրէաստանի ու Երուսաղէմի մէջ էծանուցանել տուին, որ բոլոր տարագրութենէն վերադարձողները՝ Երուսաղէմ հաւաքուին. **8** ո՞վ որ մինչեւ երեք օր չգար, իշխանաւորներուն եւ Երէցներուն հրահանգին համաձայն՝ անոր ամբողջ ինքը ու պիտի գրաւուէր", իսկ ինք տարագիրներու համախմբումէն պիտի գատուէր: **9** Ուստի Յուդայի ու Բենիամինի բոլոր մարդիկը **այդ** երեք օրուան մէջ Երուսաղէմի մէջ հաւաքուեցան, **այսինքն՝** իններորդ ամսուան քսաներորդ **օրը:** Ամբողջ ժողովուրդը Աստուծոյ տան հրապարակին մէջ կեցաւ, **այս** խնդիրին համար եւ տեղատարափներուն համար դողալով: **10** Եգրաս քահանան կանգնեցաւ ու անոնց ըսաւ. «Դուք ուխտազանց եղաք, եւ օտարազգի կիներ առնելով՝ հսրայէլի յանցանքը աւելցուցիք: **11** Ուստի հիմա խոստովանեցէ՛ք **ՃԵՐ ՅԱՆՑԱՆՔԸ** Տէրոց՝ ճեր հայրերուն Աստուծոյն, ու գործադրեցէ՛ք անոր կամքը. զատուեցէ՛ք Երկրին ժողովուրդներէն եւ օտարազգի կիներէն»:

12 Այն ատեն ամբողջ համախմբումը պատասխանեց ու բարձր ձայնով ըսաւ. «Մեր պարտքն է ընել ինչպէս որ ըսիր: **13** Բայց ժողովուրդը բազմաթիւ է, ու

^ա **Եբր.**՝ գետինը իյնալով

^բ **Եբր.**՝ լալով

^գ **Եբր.**՝ բնակեցուցինք մեզի հետ

^դ **Եբր.**՝ դուրս հանենք

^ե **Եբր.**՝ դողացողներուն

^գ **Եբր.**՝ խորհուրդին

^հ **Եբր.**՝ ձայն անցընել

^լ **Եբր.**՝ տարագրութեան որդիները

^մ **Եբր.**՝ նզովուած պիտի ըլլար

^գ **Եբր.**՝ վրայ

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՅԸ

տեղատարափներու եղանակն է. դուրսը չենք կրնար կայնիլ: Նաեւ ասիկա մէկ կամ երկու օրուան գործ չէ, քանի մեզմէ շատերը այս խնդիրին մէջ յանցաւոր են: **14** Ուրեմն մեր իշխանաւորները ամբողջ համախմբումին համար թող կենան, ու մեր քաղաքներուն մէջ բոլոր օտարազգի կին առնողները որոշուած ատենաները թող գան, եւ անոնց հետ՝ իրաքանչիւր քաղաքի երէցներն ու անոր դատաւորները, մինչեւ որ այս խնդիրին համար մեր Աստուծոյն բորբոքած բարկութիւնը մեզմէ հեռանայ»:

15 Միայն Ասայէլի որդին՝ Յովնաթան, ու Թեկուայի որդին՝ Յազիա ասոր իշնդիմացան, եւ Մեսուղամ ու Սաբեթա Ղետացին անոնց օգնեցին. **16** իսկ տարագրութենէն վերադարձողները այնպէս ըրին: Եզրաս քահանան եւ քանի մը Շահապետներ և Շնտրուեցան՝ իրենց նահապետութիւններուն համեմատ (բոլորն ալ **իրենց** անուններով), ու տասներորդ ամսուան առաջին օրը Շհամախմբուեցան՝ **այս** խնդիրը կը նելու: **17** Բոլոր օտարազգի կին առնող մարդոց **գործը** առաջին ամսուան առաջին օրը աւարտեցին:

ՕՏԱՐ ԿԻՆ ԱՌՆՈՂՆԵՐԸ

18 Քահանաներու որդիներէն օտարազգի կին առնողներ գտնուեցան. **այսինքն՝** Յովսենեկեան Յեսուի որդիներէն ու եղբայրներէն՝ Մաասիա, Եղիազար, Յարիբ ու Գոդողիա: **19** Անոնք իրենց կինները արձակելու յիօսք տուին, եւ յանցաւոր ըլլալով՝ իրենց յանցանքին համար հօտերէն **մէկական** խոյ ընծայեցին. **20** Եմմերի որդիներէն՝ Անանի ու Զաբադիա. **21** Հարիմի որդիներէն՝ Մաասիա, Եղիա, Սեմայիա, Յեքիէլ եւ Ոզիա. **22** Փասուրի որդիներէն՝ Եղիովենայի, Մաասիա, Իսմայէլ, Նաթանայէլ, Յովզաքադ ու Եղեասա: **23** Ղետացիներէն՝ Յովզաքադ, Սեմէի, Կովդիա, այսինքն՝ Կովդիտա, Փեթայիա, Յուդա եւ Եղիազար: **24** Երգողներէն՝ Եղիասիբ, ու դռնապաններէն՝ Սեղում, Տելէմ եւ Ուրի: **25** Իսկ Խսրայէլէն.՝ Փարոսի որդիներէն՝ Ռամիա, Յեզիա, Մեղքիա, Միամին, Եղիազար, Մեղքիա ու Բանեա. **26** Եղամի որդիներէն՝ Մաթանիա, Զաքարիա, Յեքիէլ, Աբդի, Յերիմովթ եւ Եղիա. **27** Զաթուի որդիներէն՝ Եղիովենայի, Եղիասիբ, Մաթանիա, Յերիմովթ, Զաքադ ու Ազիզա. **28** Բերայիի որդիներէն՝ Յոհանան, Անանիա, Զաքբայ **եւ** Աթաղի. **29** Բանիի որդիներէն՝ Մեսուղամ, Մալուք, Ադայիա, Յատուք, Սաադ ու Ռամովթ. **30** Փահաթ-Մովզաքի որդիներէն՝ Եղնա, Քաղէլ, Բանեա, Մաասիա, Մաթանիա, Բեսելիէլ, Բանուի ու Մանասէ. **31** Նարիմի որդիներէն՝ Եղիազար, Յեսիա, Մեղքիա, **32** Սեմայիա, Շմաւոն, Բենիամին, Մալուք **եւ** Սամարիա. **33** Հասումի որդիներէն՝ Մաթանայ, Մատաթա, Զաքադ, Եղիփաղէտ, Յերեմի, Մանասէ **ու** Սեմէի. **34** Բանիի որդիներէն՝ Մաադայ, Ամրամ, **35** Ուէլ, Բանեա, Բադայիա, Քեղուհայ, **36** Ուանիա, Մերամոթ, Եղիասիբ, **37** Մաթանիա, Մաթանայ, Յաատու, **38** Բանի, Բանուի, Սեմէի, **39** Սեղեմիա, Նաթան, Ադայիա, **40** Մաքնադրայ, Սասայ, Սարայ, **41** Ազարիէլ, Սեղեմիա, Սամարիա, **42** Սեղում, Ամարիա **եւ**

^հ **Եբր.**՝ դէմ կեցան

^ւ **Այսինքն՝** հայրերու գլխաւորներ

^ի **Եբր.**՝ զատուեցան

^ծ **Եբր.**՝ նստան

^դ **Եբր.**՝ փնտոելու

^է **Եբր.**՝ իրենց ձեռքերը

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՅԸ

Յովսէփ. **43** Նաբակի որդիներէն՝ Յէիէլ, Մատաթիա, Զաքար, Զեբենիա, Յաղայի, Յովէլ **ու** Բանեա: **44** Ասոնք բոլորը օտարազգի կիներ առեր էին, եւ անոնցմէ **ոմանք** որդիներ **չծնած** կիներ ունէին:

^ձ **Եպք.**՝ ունեցած